

Ֆրանսիայի պատմաբանի այս զեկուցումը, որ կարգացուել է Փարիզի առաջնակարգ հասարակութեան առաջ, մի օրտաճմիկ տեսարան է բաց անում ընթերցողի առաջ. նա նկարագրում է տաճկահայերի քաղաքական ծանր վիճակը, նոցա իրաւագուրկ կացութիւնը, 95—96 թ. կոտորածները, եւրոպական տէրութիւնների խոստումները, որոնք նոյն իսկ Բեռլինի 61 յօդ. մոռանալով թոյլ են տուել, որ տաճիկ կառավարութիւնը տաճկահայերի նկատմամբ ձեռք առած ճնշումները պարբերաբար շարունակի: Իւր զեկուցման վերջում նա կոչ է անում ունկընդիրներին քարոզել ամենայն տեղ Հայաստանի վաստակեալների և բեռնաւորների բաղբի ծանրութիւնը թե թեւացնելու համար, որովհետեւ ֆրանսիական կառավարութիւնը և ժողովուրդը արեւելեան քրիստոնեաների պաշտպան են համարւում:

Լ. Վ.

Ազգագրական Հանդէս: Եռամսեայ, խմբագրութեամբ Ե. Լալայեանի և հրատ. հայոց Ազգագրական Ընկերութեան: Լոյս տեսաւ Հանդիսի 1907 թ. XVI. գիրքը, որ կազմած է հետաքրքրական բովանդակութեամբ: Զետեղուած նիւթերի մէջ ի միջի այլոց արժանի են ուշադրութեան. 1) Նոր-Բայազէտի գաւառ. ազգագրութիւն Ե. Լալայեանի. 2) Հայ ժողովրդական վէպը. Մ. Աբեղեանի. 3) Հայ ժառանգական իրաւունքը Խ. Սամուէլեանի. 4) Էջմիածին և հայոց հնագոյն եկեղեցիները—Մեսրոպ վարդ. Տէր Մովսիսեանի. 5) Կաթողիկոսական յուղարկաւորութիւն և թաղումն. Գարեգին վարդ. Յովսէփեանի և այլն: Զետեղուած են նաև յաջող պատկերներ ու մի քանի մակարդակներ: Ամբողջ հատորը պարունակում է մօտ 240 երես:

Բ. Իսխանեան. — Թիւրքիայի ապագան, Թիֆլիզ, 1907, գինն է 10 կոպէկ: Ներկայ քննական էտիւտի մէջ հեղինակը փորձում է գիտական եղանակով որոշել

Թիւրքիայի ապագան, որը այնքան մեծ նշանակութիւն ունի մեզ հայերիս համար, մի երկրի, որը իր վրայ է կենդրոնացրել մեր հասարակական իրական ուժերի տհաճին մեծամասնութիւն, հեղինակը իր ուսումնասիրութեան հիմք է առնում Թիւրքիայի օբյեկտիւ իրականութիւնը, կօնկրէտ դրութիւնը, որով հնարաւորութիւն է ստանում միանգամայն այլ տեսակէտ հիմնաւորելու Թիւրքիայի յարաբերութիւններին զարգացման ապագայ ընթացքի նկատմամբ, քան այն ուսուպիստների տեսակէտը, որոնք իրենց խակ, ցնորամիտ ծրագրներով մի ամբողջ ժողովրդի փրկութեան անկոչ ղեկավարներն են մինչև օրս հանդիսացել: Դժբաղդաբար ամսագրիս էջերի սղութիւնը թոյլ չի տալիս երկարօրէն կանգ առնելու և քննադատական հայեացք ածելու պ. Իշխանեանի գլոբալ վրայ, սակայն աւելորդ չի լինիլ առաջ բերել հեղինակի եզրակացութիւնը Թիւրքիայի ապագայի և մասնաւորապէս Թիւրքահայ գաղթի մասին. «Թիւրքահայ հարցը Թիւրքահայերի համար, առանց աչք դնելու գրսի հայերի օժանդակութեան վրայ, Թիւրքահայ գործերի ղեկավարութիւնը Թիւրքահայերի ձեռքում առանց ենթարկուելու Լուվիասեան ըմբռնող յեղափոխականների գիրեկտիւններին, հրամաններին, Թիւրքիայի ապագան որոնել համաթիւրքական ապագայի ծոցում, առանց խաբուելու ուսուպիական ծրագրներից և անբովանդակ պատրանքներին»:

Խ. Ս.